



16. ԿԱՐՄԻՐ ԶԿԱՆ ՀԵՔԻԱԹՐ

Ըլում ա, չի ըլում՝ մի թաքավորի քաղաքում մի պառավ կնիկ.
նրան ունենում ա մի աղա՝ շատ դալսլ, էնքան դալսլ, որ տակին
անելիս է ըլում, էն պառավը՝ սրբելիս:

Աշունք ժամանակ ա ըլում, ցուրտ, սելվորնին փետի գնալիս
են ըլում: Պառավը մի լուծ լավ եղն ա ունենում: Սելվորներին դան-
շանք ա անում, թե.— Իմ սելն էլ լծեմ, տղեն գնեմ մեջը, հետնե-
րուդ տարեք, որ փետ անեք, բարձեք, իրեն էլ եդ դնեք վրեն, էնքան
ըլի, որ քշի բերի:

Լծեց, էրետ իրան, քշեցին գնացին:

Գնացին թաքավորի պալատի տակը. մի ջուր կար ընտեղ, ել-
նիքը ընտեղ ընկան ջրի մեջը, մի Կարմիր ձուկը եզան ոտի հետ
ընկավ ցամաքը:

էն տղեն ասավ, թե.— Ա՛յ ձուկը, քու տեղը ինչ նեղ էր, որ
ջրիցը ընկար ցամաքը:

Թաքավորի աղջիկը բալկոնումը ընկած թմաշա աներ:

Հընկերտինքը ասին էդ տղին, թե.— էդ ձուկը վեկալ տանենք
ոտենք:

Տղեն ասավ, թե.— Ո՛վ ա սելիցը վեր գալի,— ճիպոտով բո-
թեց գձեց ջուրը:

Ձուկը կաղնեց ջրումը, ասավ.— Որ դու գձեցիր ինձ ջուրը, ա՛յ

աստժու իրան տակին՝ ինչ որ խնդիրք անես, քու խնդիրքդ կատարեմ ես:

Թաքավորի ախշիկը բալկոնի վրեն կաղնած թամաշա անելիս, էդ տղեն տակին անում ա: Ախշիկը, որ էդ տեհավ, ասավ.— Վիկալեք դձեցեք շուրը էդ ֆոտաժին:

Տղի ջիգրը շատ էկավ, ասավ.— Կարմիր ձուկը, խնդրում եմ, որ էդ ախշիկը էրկուֆոքիսանա:

Ախշիկը էն սհաթն էվետ էրկուֆոքիսացավ: Մերը մի առժամանակից եղը տեհավ, որ ախշիկը էրկուֆոքիս ա, թաքավորին կանչեց, շանց էրետ, որ ախշիկը էրկուֆոքիս ա:

Թաքավորն ասավ.— Ինչ տր դրան կանե՞մ, դու կտենաս:

Մերը ախշկանը ասեց.— Արի ինձ խոստովանվի, տենանք ումնից ա:

Ախշիկը մի առժամանակից եղր խտոր ընկավ, մի տղա ըրեխա էբեր:

Թաքավորն էկավ, տեհավ, որ դրուստ որ խտոր ա ընկել, կանչեց բոլոր ժողովրդին, ասավ.— Ախշկան իրա բալուլովը դուս բերեք բալկոնը:

Իրան ժողովրդին ամենքին մի խնձոր էրետ, ասավ.— էդ խընձորնին կղցեք, որ մինը ախշկանը տաք, մինը՝ բալուլին:

Լուրախ-ուրախ խնձորնին զցեցին ախշկանը, ոչ մինն էլա կարացին ոչ որ տան:

Թաքավորի շատ շիգրն էկավ, ասավ.— Տեհեք քաղաքումը էլ մարդ կա՞, թե՞ պրծավ:

Ասին թե.— Թաքավորն ապրած կենա, մի պառավի տանը մի տղա կա, բերելու չի, դալսլ ա:

Ղրկեց, թե.— Գնացե՛ք, ոնց որ ըլի բերել պտիք:

Գնացին դռով էգ տղին վիկալան, բերին: էդ տղին որ բերին, թաքավորը էրկու խնձոր էրետ դրան,— ասավ.— Գցիլ պտես, որ մինը բալուլին պտիս տա, մինն՝ աղջկան:

էս տղեն խնձորը վրա արավ, էրետ աղջկա ճկատին, մինն էլ վրա արավ, էրետ բալուլին:

Թաքավորը ժողովրդին ասավ.— Տեհաք, որ դուք կարացիք ոչ տալ, դա էրետ: Տեհա՞ք, որ դրա բանն ա, էդ էրեխեն դրանից ա: Գնացեք էս սհաթին մի գոմեշ բերեք ըստի, մի ղասաք էլ բերեք:

Գնացին բերին: Ղասաբին ասավ.— էդ գոմեշը մորթե՛:

Ղասաբը գոմեշը մորթեց ու քերթեց: Մի կպրչու կանչեց, ասավ.— էդ աղջկան էլ, բալուլին էլ, էն տղին էլ դիր էդ գոմշու կաշու մեջ, դալիմ կարի:

Կպըըչին էրեստ կարեց:

Թաքավորը տվեց շորս տղի ասավ.— Վիկալեք տարեք էս
Ֆլան տեղումը արևի տակը վեր դրեք ու էկեք:

Տարան, դրին, էկան: Մնացին դրանք արևի տակին: Արևը շատ
կաշին շորացրուց ու հուսի էրեստ. աղջիկը տղին ասավ.— Ա՛յ տղա,
ախր դու մի բան կունենաս, որ ես էրկուֆոքիսացա, արի դու էդ
բանը խնդրվի, մենք էս կաշու միշիցը գուա դանք, թե չէ էս արևը
մեզ հուպ կտա, կկտորվենք:

Տղեն, թե.— Կարալ չե՛մ:

Աղջիկը սկսեց դրան ղանչանք անիլը:

Տղեն ասավ.— Մ՛ֆ, Կարմիր ձուկը, խնդրում եմ ազատես էս
մեզ տեղիցը:

էն սհաթը կաշին պատռվեց, միշիցը դուս էկան. եփոր դուս
էկան կաշվի միշիցը, աղջիկն ասավ.— Սոված մեռնում եմ, դու էլ
կըլես սոված, բի՛, էդ բանն ինչ բան որ ա, խնդրվի, մեզ հմար
հաց ըլի ըստի, որ ուտենք:

Տղեն ասավ.— Կարմիր ձուկը, խնդրում եմ, որ ըստի հաց
ըլի, ուտենք:

էն սհաթին հացը դուս կացավ, լավ հաց կերան:

Աղջիկն ասավ, թե.— Ա՛յ տղա, եփոր էդ հունարն ունես, մենք
ըստի անտուն, անտեր կկտորվենք, բի էդ բանին խնդրվի, միննալ
եմ անում, որ մեզ ըստի թաքավորի ամարաթի պես մի ամարաթ
դուս կենա:

Տղեն խնդրվեց, էն հադադը ամարաթը դուս կացավ: Նի մտան,
տեղավորվեցին:

Թաքավորը ոավոտը վիկացավ էն տեին մտիկ արավ, տեհավ,
որ իրա ամարաթիցը լավ ամարաթ էն դըզումը:

Իրան նազըրնուց էրկըսին զարկեց, թե.— Գնացե՛ք, տեհեք.
Թե էդ ի՞նչ ամարաթ ա, տեհեք ո՞վ կա մեջը, ինձ հմար մի խա-
բար բերեք:

Գնացին նազըրնին տեհան, որ միշին մի հատ տղա կա, մի
խանում:

էկան թաքավորին ասին, թե.— Թաքավորն ապրած կենա, թե
դու էն թավուր խանում ունենաս՝ էլ քեզ ի՞նչ կա աշխարքի մեջը:

Ասավ.— Ա՛յ նազըրնի, էն խանումին տեր շունի բա՛:

Ասին.— Մի տեր ունի, որ իրենից դահա լավը:

— Որ տենց եք ասում, վե կացեք մեր դոշունով գնանք,
տենանք:

Դհանք վի կացան, դու էլան, գնացին: Գնացին տեհան, որ
դրուստ՝ միջին մի լավ տղա:

Աղջիկն ասավ տղին.— էդ ա՛ որ թաքավորը ղոշունով էկել ա,
դու խնդրվի էդ բանին՝ ամենի համար մի աման կերակուր, մի
ոսկի դղալ:

Խնդրվեց տղեն, ինչ որ ասավ՝ շիմ դուս կացավ: Հացը որ
կերան, աղջիկը տղին կանչեց, թե էդ բանին խնդրվի, որ էն ոսկի
գդալը թաքավորի գտակի տակից դուս կենա, որ օքմին շգիտենա:

Տղեն խնդրվեց՝ գդալը թաքավորի գտակի տակին դուս կա-
ցավ:

Սկսեց տղեն ամանները հավաքիլը:

Աղջիկն ասավ.— Գդալների մինը կա՛ ոչ:

Թաքավորը շիմ օպիս անիլ էրեստ իբա ղոշունի մեջը, ոչ մեկի
ձեռին էլ գդալը գտան ոչ:

Աղջիկը ընդիան դուս էկավ, թաքավորին ասավ.— Դու ինձ
ասեիր, թե էդ էրեխեն մարգից ա, բա էս գդալը, որ սուսից կոր-
չում ա, էդ ումնի՞ց ա:

Թաքավորն ասավ.— Դու գիտես, գդալը ո՞ւմ ձեռին ա:

Աղջիկն ասավ.— Թաքավորն ապրած կենա, թե կուզես քեզա-
մաղ իլ, կուզես՝ չէ, գդալը քու գտակի տակին ա:

— Ի՞նչ ես ասում,— ասավ,— ախշի՛:

Ասավ.— Գտակդ վի վալ, թե տի շի լի, ինձ պատըծի:

Թաքավորը գտակը, ասելու հետ, վի կալավ, գտալը վեր ըն-
կավ միջից:

Աղջիկն ասավ.— Թաքավորն ապրած կենա, գդալը ըտեք:
դնողը ինձ էլ անմարդ կարա էրկուֆոքիսացնի՞ թե չէ:

Թաքավորն ասավ.— Ախշի՛, ինձ ուզում ես թե խափե՞ս: Բա,
թե՛ էդ ղալղի հունար ունեք, քշերս ձեր ամարաթը տարեք իմ
ամարաթի կուշտը: Թե էդ հունարն անեք, ես որ էլ որդի չունեմ,
իմ ձեռքը ձեզ պսակեմ, իմ թախտի վրեն նստացնեմ:

Աղջիկն ասավ.— Բա՛ շուստա՛, թաքավոր, եթե կարողանանք
ոչ՝ մեր էրկուսի գլուխը քեզ հալալ:

Աղջիկը մի տեղ շինեց թաքավորի համար, ասավ.— Դու
էս տեղումը քնի, ինչ վախտ որ վի կենաս, տես էս ամարաթը
որդի ա:

Թաքավորը պառկավ քնավ. վի կացավ՝ մտիկ ադավ, տեհավ:

1 Գլխիս վրա—Մ. Կ.:

որ ամարաթը իրան ամարաթի կողքին, քարը քարին կպցրած,
հավատաց, որ էդ տղեն էդ մարիֆաթը ունի, իրեն աղջիկը ան-
մեղ ա, նոր հալալ արավ, քերեց պսակեց, իրեն թաքավորութիւնը
էրես էդ տղին:

Նհանք հասան իրանց մուրազին, իմանողներն էլ հասնին
քրանց մուրազին:

Աստըծանե իրեք խնձոր վեր դա. մինն՝ փնձ, մինն՝ ասողին,
ժակ մինը՝ լսողներին:

